22-ՐԴ ՆԻՍՏ

28 սեպտեմբերի 1918թ.

Նախագահում է *Ա. Սահակյան.* ներկա են Մինիստր-նախագահը, ներքին գործոց և զորական մինիստրները: Նախագահը կարդում է օրակարգը հետևյալ կարգով.

1. Գաղթականական խնամատարության օրինագծի վերջնական հաստատումը.

2. Դիլիջանում գանձարան բաց անելու օրինագծի վերջնական հաստատումը.
3. Քրեական դատավարության մի քանի կետերի փոփոխության վերջնական հաստատումը.
4. Կառավարությանը վարկ բաց անելու մասին օրինագծի Ա ընթերցումը.
5. Օրինագիծ կարտոֆիլի գնման մասին (հանձնել խմբագրական հանձնաժողովին).
6. Ջուլհակային աշխատանքների նախահաշիվը.
7. Ոգելից խմիչքների և գինու վրա ակցիզ ավելացնելու օրինագծի Գ ընթերցումը.
8. Պառլամենտի քննիչ հանձնաժողովի զեկուցումը.
9. Բժշկա-սանիտարական հանձնաժողովի զեկուցումը (չզեկուցվեց).
10. Տեղական ինքնավարության հանձնաժողովի զեկուցումը (չզեկուցվեց).
11. Հայաստանի Խորհրդարանի նախահաշիվը.
12. 60.000 ռ. ավանս բաց անել խորհրդարանին.
13. Հաշմանդամ զինվորների միության վարչության անդամների դիվանի ծախսերի նախահաշիվը.
14. Կառավարության պատասխանը հարցումներին.
15. Օրինագիծ քաղաքի հողերը կապալով տալու մասին.
16. Ընթացիկ գործեր:

Էսէռական ֆրակցիայի առաջարկությամբ խորհրդարանը որոշում է Ա հերթին լսել արտակարգ քննիչ հանձնախմբի զեկուցումը և կառավարության պատասխանները հարցումներին:

Ա. Խոնդկարյան - Զեկուցում է քննիչ հանձնախմբի էջմիածին գնալու, այդ տեղի գաղթականության վիճակի, գաղթականական մարմինների մասին և այն թերությունների մասին, որ ունեցել է զինվորական իշխանությունն այդ շրջանում:

Գաղթականությունը 15 օրից ի վեր հաց չի ստացել, գաղթականական մարմին գոյություն չունի, ներք. գործ. մինիստրի լիազոր Դանիել վարդապետի պաշտոնն իրեն համար իսկ պարզ չի եղել, որբերը մնում են անխնամ, ոչ ոք պատասխանատու տեր չի ճանաչում իրեն, մի խոսքով՝ բացակայում է գործն ու կազմակերպությունը: Հանձնախումբը Շարաֆյանի հետ ստեղծում է գաղթակ[անական] մարմին և որոշում են Ապարանից հաց տալ այդտեղի գաղթականության և ապա նոսրացնել իրար վրա լցված գաղթականությունը:

Զինվորական իշխանությունը իրեն ենթակա զինվորներին կարգի ու կանոնի չի հրավիրել այն միջոցին, երբ նոքա իրենց անտակտ ու ապօրինի վարմունքով ժողովրդի զայրույթն ու զզվանքն են առաջ բերել օրինակ՝ ռեկվիզիցիա տների, հափշտակում՝ այգիների, արոտատեղերի, յոնջաների և այլն: Այդ բոլորի մեջ մեղադրում էին կոմենդանտին: Սակայն հանձնախումբը եկավ այն եզրակացության, որ բոլոր թերություններն ու զանցառությունները առաջ են եկել միմիայն նրանից, որ սիստեմ չի եղել: Զինվորական իշխանության բոլոր թերություններն էլ հեշտ ուղղելի են: Կոմենդանտի կաշառակերության ոչ մի փաստ երևան չեկավ: Այնուհետև անցնում են հերթ[ական] խնդիրներին:

Դ. Զուբյան - 1. Կարդում է գաղթականության խնամատարության օրինագիծը՝ Գ ընթերցում.

Դիլիջանում գանձարան բաց անելու վերաբերմամբ եղած օրինագծի Գ ընթերցում.

Քրեական դատավարության մի քանի կետերի փոփոխության օրինագծի Գ ընթերցում.

Ակցիզի վերաբերյալ օրինագծի Գ ընթերցում:

Հիշյալ բոլոր օրինագծերը ընդունվեցին խորհրդարանի կողմից:

ՆԳ մինիստրը տալիս է պատասխան սոց.-դեմ. ֆրակցիայի արած հարցումներին. 1. Երևան քաղաքի գաղթականությունը ինչու՞ հաց չի ստանում, 2. Ինչու՞

են գաղթականության ձեռքից գրավում քաղաք բերվող հացը, գետնախնձորը* և այլ մթերքները, 3. Ինչու՞ գրավումների դեպքում կանոնավոր ստացականներ չեն տրվում և, վերջապես, 4. ե՞րբ պիտի հացի չեկեր տրվեն գաղթականության:

Պատասխան - Քաղաքումս 5000 հոգու համար սննդատու կայաններ կան, հաց ստացող թե' գաղթ[ականներ] և թե' տեղացի հաշվվում է 36.000: Իշխանությունը միշտ հնարավորություն է տվել գաղթ[ականներին] դրսից 10-15 փ. հաց քաղաք բերել. գետնախնձորի գրավում չի եղել, միայն մի դեպք թյուրիմացությամբ տեղի է ունեցել և դա է, որ հոլովվում է շարունակ: Տրվում են արդեն կանոնավոր ստացականներ ապրանքատերերին:

Էսեռների հարցումին, թե ո՞վ է նշանակել ոմն Քրմոյանի՝ մարդահամար կազմակերպելու:

ՆԳ մ[ինիստր] - Քրմոյանին նշանակել եմ ես, նա իմ պաշտոնյան է, մարդահամարը որոշել է մինիստրությունը: Պետք է գաղթ[ականների] ցուցակագրություն լիներ, բարվոք համարվեց ամբողջովին ցուցակագրել: Ծախս մարդահամարի համար հատկացված է 20.000 ռ.՝ 6 միլիոն կրեդիտից:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Կարդում է կառավարության նոր վարկ բաց անելու վերաբերմամբ օրինագիծը: Առաջարկում է ընդառաջ գնալ կառավարության պահանջին, քանի որ 6 միլիոն կրեդիտը ծախսվել է արդեն:

Խորհրդարանն ընդհանուր առմամբ ընդունում է այն, որ պիտի ավանս տալ կառավարության, միայն թե վիճաբանություն առաջացավ այն խնդրի շուրջը, թե պիտի սահմանափակվի՞, թե՝ ոչ:

Կարդացվում է օրինագիծը կետ առ կետ և չնչին փոփոխություններով ընդունվում խորհրդարանի կողմից:

Տ. Մուշեղյան - Կարդում է գետնախնձոր գնելու օրինագիծը և խնդրում ընդունել այդ շտապողաբար:

Օրինագծի ընդհանուր հիմքերի դեմ առարկություն չի լինում: Խոսվում է գլխավորապես գնման տեխնիկական խնդիրների մասին:

Վիճաբանությունները վերջանում են, և օրինագիծը կետ առ կետ կարդացվում և աննշան հավելումով ընդունվում է ամբողջ օրինագիծը և հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Նիստը փակվում է ժ. 12-ին:

«Զանգ», 12 հոկտեմբերի 1918թ.

---

* Խոսքը կարտոֆիլի մասին է: Ծանոթ. կազմ.: